

Խորշումներուն եւ իր գեղջուկ լողիկին
Ճալքերուն մէջ արեւու
Ջերմութիւն մ'հուր, երգ մը հովէն սորվեցուած,
Քըրտինքի շիթ մը սարսռուն,
Յողի բոյրեր, կըծու բոյրեր ծոթրինի,
Այլեւս անդարձ, անվըրեժ, լուռ կը մեռնի՜ն...
Ո՛չ. յանուն հայ մռունչներուն,
Թափուած արիւնն անմեղին չի՛ մեռնիր. Ո՛չ...
Վաղն հողը դուրս պիտ' պոռթկայ
Արեւուն տակ հասկեր առլի, կեանք մը նոր,
Նոր եւ հըսկայ, հըսկայացած դիակով,
Բողբոջ մ'առոյգ, գեղեցիկ,
Վաղն այս բարի արիւնէն վեր պիտ' ելլեն
Խառնըւելով ցորենին
Նոր Սերունդի կարմիր կարմիր կակաչներ.
Որոնց արմատը կը դըպչի, պայթման մօտ,
Վարն հրաբուխի մ'ապագայ...